Տաւրոսի լեռների վրայ, հասնում էր մինչեւ այստեղ, այդ բօթաբեր քամին, աւելի եւ աւելի սաստկանալով, փոքր էր մնում, որ փշրէր բարակ ծողը, որի գլխին, աղմուկ բարձրացնելով, ծածանւում էր Բերզէն-օղլու կարմիր եւ սեւ գոյնով դրօշակը:

— Տուր ինձ թիակը, դու յոգնեցար, — ասաց նա Ասլանին, առնելով նրա ձեռքից թիակը: — Իսկ դու, իմ գառնուկ, անգործ մի մնա, վեր առ այդ գօտը եւ ջուրը դուրս ածիր:

Ես վեր առի փայտեայ գօտը, սկսեցի դուրս ածել ջուրը, որ այդ ժամանակ աւելի առատութեամբ թափւում էր նաւակի մէջ:

Արեգակը այժմ բոլորովին ծածկոեցաւ: Մառախուղը, հետզհետէ աճելով, ընդարձակոելով, բռնել էր ամբողջ հորիզոնը: Մի քանի քայլ հեռու ոչինչ չէր երեւում. կղզին անհետացաւ մեր աչքերից: Անձրեւը սկսեց սաստկանալ: Վերեւից հեղեղ, ներքեւից ալեկոծութիւն:

Երբեմն լսւում էր զանգահարութեան մեղմ ձայն, որը խլանում էր քամու կատաղի մռնչիւնի մէջ: Զանգակի այդ տխուր հնչիւնները լսելի են լինում միայն հանդիսաւոր թաղումների ժամանակ: Այդ ձայնը ինձ վրայ խիստ սոսկալի ազդեցութիւն գործեց: Միթէ՞ շուտով պիտի կատարուէր մեր թաղումը, միթէ՞ շուտով պիտի պատռուէր ջրային անդունդը եւ մեզ տանէր սառն գերեզմանի մէջ:

Ասլանը մտայոյզ էր: Նաւաստին եռանդով մաքառում էր փրփրած ալիքների հետ: Իմ մէջ սիրտ չէր մնացել:

— Այդ ի՞նչ զանգակի ձայն է, — հարցրեց Ասլանը:

— Այնտեղ, կղզու մէջ, աղօթում են, — պատասխանեց նաւաստին: — Աբեղաները սովորութիւն ունեն սաստիկ ալեկոծութիւնների ժամանակ մօտենալ ափերին եւ խմբով թափօր կատարել:

— Ուրեմն մօ՞տ ենք կղզուն:

— Շատ հեռու չենք:

Ես փոքր-ինչ հանգստացայ:

Պէտք էր նաւակի մէջ գտնուած բոլոր ծանրութիւնները ածել ծովը: Նաւաստին նետեց կողովը, որի մէջ զանազան մրգեր էր տանում աբեղաների համար: Տանձերը, խնձորները մի քանի վայրկեան ծփացին կոհակների վրայ, յետոյ անհետացան: Նետեց հացի պաշարը, որ Ծովիկը դրել էր մեզ համար: Ասլանը նետեց նորին սրբազնութիւնից իբրեւ յիշատակ ստացած փղոսկրեայ «տիրուհին»: Ես էլ յիմարացայ, նետեցի ձեռքիս փայտեայ գօտը: